


463

L III 3



ՍՈՒՐԶԱՆԴԱԿ

ԶԱՐԱԹԱԿԱՆ

30 ՓԱՐԱ

ԼԱՆՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ

ՓԱՐԱ 30

ՍՈՒՐԶԱՆԴԱԿԻ իւրաքանչիւր շրջանը 32 օրինակ է :
Շրջանին գինն է Պոլսոյ համար 40 դահեկան, կանխիկ :
Կիսաշրջանը՝ 26 թերթ 20 դահեկան : Հատը 30 փարայ :
Գաւառացի համար շրջանին գինն է թղթատարի ծախքով
48, կիսաշրջանը 26 դահեկան :



Ծանուցման տուրը 2 դահեկան : Անթար նամակ չ'ընդուն-
ւիր : Զի հրատարակուած գրութիւնք կտ չեն տրուիր :
Նամակ եւ գրութիւնք ուղղել՝

առ Տիրան Գ. Փափաղեան Կ. Պոլիս
Պապը Ա. ի ճատտէսի Ումու մի քիթուպանէ թիւ 66

ԹԵՐ 1 Գ. ՏԱՐԹ

1888

ՇԱԲԱԹ 25 ՅՈՒՆԻՍ

Ա Ա Ա

Դահութեամբ կը ծանուցանեմք մեր Մեծարոյ
բաժանորդաց թէ՛ թերթերնիս այսօրէն սկսեալ
ՍՈՒՐԶԱՆԴԱԿԻ անուամբ պիտի հրատարակենք, առ
այժմ չարաթը մէկ անդամ :

Ինչպէս կը տեսնուի, թերթիս ծաւալն ընդար-
ձակուած և նիւթոց զանազանութիւնն աւելցած
է, առանց գնոյ փոփոխման, որպէս զի ամեն կար-
գի ազգայնաց զիւրամատչելի լինի :

Այս առթիւ աւելորդ կը համարեմք յայտնել
թէ, թերթիս ուղղութիւնն ու նպատակն որ և է
փոփոխութիւն չպիտի կրեն, այլ ինչպէս էր յա-
ռաջագոյն, այսուհետեւ ևս ժողովրդական թերթ
մը պիտի լինի, և պիտի ծառայէ մանաւանդ Տէ-
րութեան և Ազգին ճշմարիտ շահուց, և անմե-
ղութիւնը պաշտպանելով՝ ազգային և ընկերական
շրջանակի մէջ տեղի ունեցած զեղծումները պիտի
ձաղկէ, յարգելով միշտ անձնականութիւնը :

Կը յուսանք թէ ընթերցասէր հասարակութիւ-
նըն ալ ինչպէս յառաջագոյն, նոյնպէս և այսուհետեւ
պիտի գնահատէ մեր ջանքերն և քաջալերէ զմեզ :

Կը խնդրենք մեր ազնիւ բաժանորդներէն,
որ եթէ օրը օրին թերթերնին չ'ստանան՝ ընդ փոյթ
իմացնեն մեզի :

Իսկ շնչակի Ե. հատորն ամբողջացնելու համար,
« Սեւ գլեկի աւերակները » թատերգութեան մը-
նայորդէն հեղհեղեմ առանձինն տպագրելով՝ պի-
տի գրկենք մեր Պատ. բաժանորդաց :



Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Վերջապէս լուծուեցաւ Պատրիարքական հը-
րաժարման և Երուսաղիմայ Պատրիարքական ընտ-
րութեան վաւերացման խնդիրն, և բացուեցաւ
Պոլսոյ Պատրիարքական ընտրութեան ցանկալի խըն-
դիրը, գէթ թեկնածու եպիսկոպոսաց համար :

Ազգային Վարչութեան Խառն Ժողովն, ըստ
Քարճրագոյն հրամանի, Սահմանադրութեան 2րդ
յօդուածի համեմատ Երկուշարթի օրը Տեղապա-
հական ընտրութիւն կատարեց, և Երուսաղիմայ
Պատրիարքական փոխանորդ Գեր. Սիմէօն Եպիս-
կոպոս Սէֆէրեան Տեղապահ ընտրուեցաւ :

Այս ընտրութիւն ոմանց գոհութիւն և ոմանց
դժգոհութիւն պատճառած է, կըսուի, բայց ինչ
որ ալ ըլլայ, մենք կըրենք թէ ընտրական բաղդը
Երուսաղէմեանց սկսած է ժպտիլ :

Խառն Ժողովն որոշեր է նաև որ Պատրիար-
քական Տեղապահի անունն յիշատակուի եկեղեց-
եաց մէջ : Այս տնօրէնութիւնն զանազան մեկնա-
թեանց առիթ տուած է, ոմանք կուզեն հետե-

յնել թէ Պատրիարքական ընտրութիւնը պիտի երկարաձգուի, իսկ այլք հակառակը կը պնդեն, սակայն պէտք է հաւատալ Տեղապահ Սրբազանի խօսքին, ն. Գերապատուութիւնը մէկ ամսուան համար ընդունելու է եղեր իւր պաշտօնն, Կարծենք Սահմանադրութիւնն ալ կը տնօրինէ թէ Տեղապահը պէտք է մինչեւ երկու ամիս Պատրիարքական ընտրութիւն կատարել տալ, թէն Պատրիարքական ընտրութիւնն ո՛րքան ուշանայ՝ ա՛յնքան դժուար կուգայ քանի մը լրագրաց, որոց խմբագրատունք տյժմէն սկսած են անտօլոր թուով հիւրեր ընդունիլ :

Լրագիր մը, ո՛վ գիտէ յիշին ինչ հոս առած է, այժմէն սկսած է մօտաւոր և հեռաւոր առաջնորդներու ակնարկութիւններ ընել վարպետ ձեւերով, և մինչ մի կողմէ կըսէ թէ Վարչութեան վրայ ճնշում բանեցնել չուզեր, միւս կողմէ ալ իւր թմբուկը կը զարնէ Վարչութեան ականջն ի վայր, խօսքը ժողովրդեան բերանը տալով :

Ասոնց սովորութիւնն է իրենց ընտրելոյն անունը չի յայտնել, բայց միւս կողմէ ալ անոր մըրցակցած գէմ շարամիտ ակնարկութիւններ ընել, որպէս զի եթէ իրենց ընտրելին ձախողի, զա՛յի վնաս, ինչպէս ասոր դառն փորձը քանիցս կրեցին :

Ինչ որ ալ լինի, ժողովուրդն այս անգամ՝ կը յուսայ թէ Վսեմ. Սիմօն Պէյի Վարչութիւնն և մեծ. Տօք. Թիւրքեան էֆէնտիի Ատենապետութեան ներքեւ գանուող Երեսփոխանական ժողովն, նոր երեսփոխանական ընտրութեանց տարրերով զօրանալով, ժամանակիս և ազգային շահուց համաձայն ընտրութիւն մը պիտի կատարեն քուէից ստուար մեծամասնութեամբ, և չպիտի թողուն որ ազգային դուրծոց մեհաշնորհն անցնի այն խմբակի ձեռքն, որ ազգային ամեն գործ, ամեն ձայն ամեն պաշտօն իւր ձեռքն անցնելու և ժողովրդեան ձայնով բարբառելու կը նկրտի չորս հինգ տարիէ ի վեր :

Կրօնական Ժողովն երէկ դումարեցաւ ի խորհրդարանն Ղալաթիոյ, ընդ ատենապետութեամբ Գեր. Խորէն Նար-Պ՛յ Սրբազանի :

Ժողովն առ. Եկեղեցիս ուղղելի չըջարեւորեալն, որ կը վերաբերի Ս. Երուսաղէմի Պատրիարք եւ Պոլսոյ Պատրիարքական Տեղապահի անուանեց յիշատակութեան, խմբագրեց եւ որոշեց որ Երուսաղէմի Պատրիարքի անուն յիշատակութիւնը վաշտընէ սկսի ի Ս. Պատարագի, իսկ Տեղապահինն Կոյսերական հրամանագրէն դաշն ետքը :

ԴԱՇՏԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

Սամաթիոյ Ս. Սահակեան Սանուց ընկերութեան 20րդ ամիսը արեւարձի հանդէսը վազը պիտի կատարուի Ազգային հիւանդանոցի դիմացի պարտիզին մէջ, ընդ հովանաւորութեամբ Վսեմ. ՄԻՔԱՅԵԼ ԷՖԷՆՏԻ ՅԱՆՈՒՅԱՆԻ :

Կարգադիր մասնախումբ մը ամեն միջոց ձեռք առած է հանդէսը վայելուչ և փայլուն ընծայելու համար :

Կը սիրենք յուսալ թէ յառաջդիմասէր երիտասարդք պիտի փութան իրենց ներկայութեամբ պատուել տոյն հանդէսն ի քաջալեր մեղուաջան Սանուց ընկերութեան, որ երկար տարիներէ ի վեր լուիկ մնչիկ կը գործէ Սամաթիոյ պէս կարևոր թաղի մը կրթական դուրծն յառաջ մղելու զգալապէս :

Կը լսենք թէ՛ մօտերս խնդրագիր մը պիտի մատուցուի առ Ազգ. Երեսփոխանական ժողովն, գաւառները այցելու հովիւներ զրկելու անմիջական պէտքն հոգալու համար ցոյց տալով տարեկան 4-500 ոսկւոյ դումար մը՝ որ Ազգային վարժարանները և կեդրոնին ելմուտքը կանոնաւորելու պատրուակուլ բաւական ատենէ ի վեր Պատրիարքարանի արգէն կող ելմուտքոյն շալակը հանուած է :

ԶԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

ՃԱԿԱՏԱԳՐԻՆ

ՄԱՏԵԱՆԸ

Որ մը Արամազդայ տօնը հանդիսաւորապէս տօնելու համար Գիք կեղնէն խնջոյք մը կ'տան. Ողիմպոսի մէջ մեծ շարժում կ'ելլէ, փառաւոր ճաշ մը կը պատրաստեն, որովհետեւ ի պատիւ հօրն աստուածոց մէջ մի խորտիկք երկնային լինելու են, որպէս զի նորա զարմանք պատճառեն. ուստի իւրաքանչիւր որ իր ուղածին պէս սնուի մը նուիրել կը մտաբերէ : Ուռեցիկ կարկանդակի համար Հեփեսոսս անուանի էր. Պաւստոս պատշաճաբար մրցեղէններ պիտի ճարէր. Թէբէի խնձորի բանդակ (մօրապապ) կը պատրաստէ. Ապոլոն խորտիկը կը դարձնէ. Բաղոս զինին կը բարէ և Յունոս անուշեղէններն (զոմբօսիօ) . Երսո պտուղներ կը խոտանայ. Ասկլիպէս քաղցրահամներ կը քամէ. Պօսիթօն կարմրամիս (ձուկ, Սօմօն) կը նուիրէ. Եւդէ՛ լաւագոյն քան զամենայն պտուղից շալիք չինել միայն կը գնէ. Ժերուշին Պղուտօն՝ փարունգիկներ, Բրիարօս՝ խեցղեւորներ կը բերեն. Եւրատոս հացի կեղևի պատառով արդանակ կ'ընծայէ. Աստղիկ շարաքարեղէնները կը հոգայ

և վերջապէս Հէրմէս աւելի որկրամուլ քան զգոն՝ Շիվէյի (սլանդոսկը) կ'իջնէ մեծ խեցեղեղին գտնելու համար :

Չ'երկարենք , ամեն բան կարգին է , խնջոյքին համար բան մը պակաս չէ . սոյն քաղաքավարութենէն Արամազդ յոյժ կ'զգածուի , ուստի սիրայօժար կ'երևայ և ամեն կերակուրներուն ալ մեծ պատիւ կընէ : Կուտեն , կը խըմեն , կը խնդան , աշխուժինք ի բաց կը վանեն , ապա ազանգերի պահուն հօրն աստուծոյ երգը կ'երգեն . Ապոլոն քնար կը դարնէ , յանկարծուտ կը յօրինէ , ըստ որում հանգէսը իրեն կը ներշնչէ , Կատէրիս՝ արինգովը անոր կ'ընկերակցի և երգի միջոցին բազում յիմարութիւնք կընեն , երկնային աւելը կը բաժակցին և յաճախ ամփրոտեան նեկտարն շտապաւ ըմբռնուի : Կը կընեն ա՛յնչափ որ՝ խնջոյքին վերջերը առ ի շեղ կերթան : Նոյն պահուն Արէս ու Աստղիկ սեղանէն կը կծկեն , կ'աներեւութանան :

Կանխմէթեայ քով Ուրանոս սիրալիւր կը քծնի , Աթենաս թէև կը խօսի՝ բայց զինքը մօտիկ ընող չըլլար . Բազոս իւր օրհնութիւն առ կը գլորի , Բօփաբոս և Յունոս համակիրք կը բորբոքին . Թէմիսի աչքերը կը վառվորեն , Ֆըլօրա՝ անհանգիստ կըլլայ , Մօմուս՝ կ'երգէ , Հէփեսոսոս՝ կը նիւնէ , Ասկղիպոս իւր մերձակոցայ կը կառչի , Հերմէս ըստ սովորութեան յօժարամիտ՝ սեղանէն ելնելու առտեն իւր սպանները գրպանը կը դնէ :

« Օ՛հ , օ՛հ , կըսէ Արամազդ , գէշ չեմ ըներ կարծեմ եթէ պահ մը տեղս կըմտնեմ , այս աղմուկները գլուխս կը ցաւցնեն , չիտակը շատ սքանչելի սեղան մը տուին ինձ , կերակուրները ընտիր էին . . . այլ ուստի՞ է որ քալած ատենս ամեն բան կը դառնայ . . . երթանք , պառկինք , բայց ի՛նչ ապուշ եմ . . . Թոռիս վրայ մոռցայ ճակատագրին մատենանը , ուր նայելու եմ թէ վաղը աղէկ պիտի լինի՞մ , և թէ պէ՛տք է որ հողմը ի՞նչնէ . երթամ թեիս առկն առնում զայն , բայց որպէ՛ս զի վտանգ մը չի պատահի , յուշիկ յուշիկ քայլիմ . . . » :

Արամազդ գիրքը կ'առնու և վերադառնալով կենէ առ խարխալի . . . սակայն ճամբան բնաւ չի տեսներ , ամենեւին չի նշմարեր ըրած կորուստը , ճակատագրի մատենանը թեւին տակէն կ'իջնայ յերկիր : Մինչդեռ յերկինս բընաւ պատահած դժբաղդութեան վրայ չեն իսկ կասկածիր , դուշակեցէք թէ ո՞վ կը գտնէ այն ա՛նուի մատենանը՝ որոյ մէջ ապառաջն՝ առաջուց , մահկանացուաց դճուճ կենցաղը գծած է . բիրտ աւազակք , մեծ պողոտայից դողեր անտառի մը մէջ կը գտնեն ճակատագրի սոյն մատենանը :

Նորա ծածկոյթէն , որ ամենափայլ կը շողար , առաջակայտն յանկուցեալ կը գոչէ .

— Կեցցէ՛ , ոսկեհարթ տախտակ մէ սա , կ'երգնում թէ կառքէ մը վար ձգած եմ :

Այլ ո՞րչափ մեծ կըլլայ զարմանքն իւր և իւրայնոց , երբ ուշադրութեամբ կը զիտեն թէ մեծ գիրք մէ եղեր :

Անմիջապէս աւազակագետը զայն կը բանայ և կը պոռայ . « Ընկերք , մեծ բաղդատումը մեզի դարկաւ . այս գիրքը կը սովորեցնէ թէ ի՞նչպէս ապրելու ենք , մեր բաղդը կը պարունակէ , ուստի մօտեցէք որ իւր պատգամները լսենք : » Այս խօսքին վրայ աւազակք իրենց պետը կը չրջապատեն , ամենքն ալ հետաքրքիր են իրենց ճակատագրին իմանալու , յուսովով որ հոն անվիշտ բերկրութիւն պիտի գտնեն :

— Պահ մը կ'եցէք , կըսէ պետը , ըստ օրինի նախ և առաջ իմ բաղդս նայելու եմ :

— Մեծաւորն իրաւունք ունի , կը միմուռն աւազակք :

— Մէջերնուդ ո՞վ իր ականոցն ինձ պիտի տայ , կը կրկնէ պետը , ա՛յնչափ հազուադէպ կը կարգամ որ աչքս յստակ չի զօրիր :

— Առէք տէր իմ , կը դոչէ աւազակ մը , սա միապակեայ ականոցն ունիմ , զոր երէկ գողցայ , մինակ չղթալին համար :

— Տուր նայիմ . . . աչքիս աղէկ յարմարեցաւ , իմ գործածածս ալ այս թիւն էր :

— Ընդհանրապէս անանկ կըլլայ , դողին ձեռք ձգածը միշտ իրեն բանին յարմար կուգայ :

Աւազակագետը բաւական թղթատեց և վերջապէս սա վճիռը կարգաց .

« Նաք ո՞րքն է ինչպէս « թէ օրէն պիտի իմանայ որ : »

— Վա՛յ դետին տակը անցնիս դու , ստաման տանի դեղագիրք , գոչեց զայրագին ու զիրքը մէկդի նետեց : Իրմէ ետքը մէն մի աւազակ իւր ճակատագիրը գիտնալ կուգէր . զիրքը ձեռք կ'առնուն , բայց ամենքն ալ կը զոջան , զի բաղդերնին միշտ մահաբեմ կը խոստանար իրենց . ուստի , միաբերան կ'աղաղակեն .

— Ստաման տանի այս մատենանը , որ արժեքաւոր բան մը չի պարունակելէ զատ՝ արուեստնիս զգուշի կը ներկայացնէ մեզի . պէտք է զայս մեր վախառուին ծախել , այո , ծախենք . . . և հիմա . անմիջապէս :

Ըստ սոյն որոշման՝ երկու աւազակք քաղաք կերթան , ուր կրնան դիւրաւ մօտ գտնել այն ամեն աւազակներ՝ որք զգուշաւոր մարդիկ են և վախառուներու հետ յարաբերութիւն ունին :

Մեր գողերը կը ներկայացնեն մատենանը իրենց վախառուին , որ մէկ երկու թուղթը դարձնելէն ետքը կըսէ .

— Ես ասիկայ չեմ ուզեր , վաճառի՛մ զի միտքը չեմ հասկնար :

— Այս գիրքը կը սովորեցնէ քեզի թէ ի՞նչպէս ապրելու եմ :

— Տէր ողորմեա , այդ ալ չի գիտնալի՞ք բան է . . . ապրելը ստակով կըլլայ , ստակով . անանկ զիրքի , թուղթի թերթի այլ ևս ստակ տուող շատ չի կայ :

— Բայց գոնէ կողքին համար բան մը վճարէ , տե՛ս , որչափ չքեղ է , ոսկի է :

— Ե՛հ , սանկ . . . չեմ կարծեր որ մեծ բան մը արժէ :

— Ինչ կուտաս նէ տուր , ամբողջ քսակդ ուղղով չի կայ :

Վերջապէս վախառուն յոյժ չնչին գնով մը ծախու կ'առնէ ճակատագրին մատենանը և աւազակաց հեռանալէն ետքը կ'սկսի զայն թղթատել՝ ըսելով . — Ոսկեհա՛ն առեալ տուր մը ըրի , այս գիրքն ստուգիւ գտնած մէ . . . ապա զայն դիտնալ , դուշակաց արուեստն է այն . . . փիլիսոփայական քարն է այն . . . երջանիկ գաղտնիք . . . բայց նախ և առաջ առնենք թէ բաղդը ի՛նչ ջերապահած է ինձ .

Եւ մատենանին մէջ իւր անունը բնութեց , փութանալի աչքէ անցուց . . . լափեց . . . հապճեպեց ու վերջապէս սա գտաւ .

« Ի քանի մեռնիցն . »

— Ի բանտի մի . . . ուրեմն դետին անցնիս , ստաման տանի քեզ , կակաղեց սարսափէն այլայլմէ եղած , և պահ մը յետոյ յարեց . — այս գիրքը լաւ բան մը չի պարունակէր . գրաւ կը դնեմ թէ սուտ է . ջանանք ուրիմն

ծախել զայն. համոզելով զյաճախորդն թէ ամենեւին չի տանք : Գրացիս, մեծ պարոնը կրնայ առնուի, զինքը համոզելու եւ որ չահիւմ, իմ ուղածս ալ այս է. քսան ֆըսրանքի տպրանք եղաւ ինծի. եթէ հազարի ծախեմ՝ ստակն առած կրլլամ :

Այս մտածմամբ ճամբայ կելնէ, իւր ցնցոտի զգեստին տակ պահելով ՃԱԿԱՏԱԳԻՐՆԻ. և չերկարենք, ճամբան ոչ սք կը մակարերէ թէ իւր ճակատադիւրն է որ մօտէ կանցնի :

Վաչխառուն խեղճն պարոնին կը ներկայանայ :

(Գալ անգամ)



ԹԵՐԹՕՆ ՍՈՒՐՃԱՆԴԱԿԻ

Մեր այսօրէն հրատարակել սկսած Թերթօնը ի վերջոյնորէն չի պիտի տպագրուի, ուստի կը խնդրեմք աղնիւ ընթերցողներէն, որ անուշադրութեամբ թերթ չի կորսնցնեն, ըստ որում կորուսեալ թերթ մը պիտի վաճառի 5 դահեկանի :

Մ Ե Ր Ի Օ Ս Ք Ը

ԱՌ Խ . . . ԵՐՔ Դ . . . ԽԻԹ

Իզմիրի դաս մը համբալներու կողմէ անստորագր համակներ կը շարունակեն տեղալ հոս, ի Պոլիս, օգային ըսպառնալեօք և խայտառակ պարունակութեամբ լի, որոց մեր արժանապատուութիւնն չնհրեր երբէք պատասխանել, մինչև որ այդ հարթթամներն զգատտանալով և հրապարակի վրայ իրենց առարկութիւններն յառաջ բերելով մեր նախորդ ըսածներն հերքելու չեննա :

Մենք կը ճանչննք այդ պարոններուն ու ըլլալը և քանի հոգիէ բաղկանալը, սակայն զեռ ժամանակը չէ մտնանալ ընել զանոնք, որպէս զի այն օրն յորում պիտի պարտաւորինք՝ ընդարձակօրէն խօսինք բոլոր պատահած անցքերու եւ անոնց բուն հեղինակներու ճշմարիտ արժանաւոր վրայ : Միայն սա չափ կը յաւելցնենք թէ՛ եթէ հայհոյութեամբ և խայտառակ միջոցներով հարբին ըլլար իրաւունք չահիլ, շատոնց Զմիւռնիոյ հանդուցեալ Պրպոնն յաղթանակ կը տանէր եւ Իզմիրի հակամարտութեանց խմբին պատկանող այդ 7-8 պարոններուն պաշտելի շահատակը կը հանդիսանար . . .

Ինչպէս կը յիշեն ընթերցողք, մեր նախորդ ըսածներն բնաւ չէին վերաբերիր առաջնորդութեան, նոյն իսկ Զմիւռնիոյ խնդրոյն, այլ գերեզմանատան խնդրոյն առթիւ Արօն, ժողովոյ անհեռատեսութիւնը եւ անոր ազդամբն հետեւածքը հասկցնել ուղած էինք : Միթէ յանդա՞նք էր այս, եւ եթէ էր՝ ի՞նչ իրաւունք ունէին Զմիւռնիոյ քանի մը պարոններ առանձինն միջամտիլ լինելու այս խնդրոյն եւ այն ալ այնքան անտրուկ եւ վատ միջոցներով՝ որ պատիւ չի բերել բնաւ Իզմիրցիի անունը կրող նոյն իսկ ֆառու-եօթի մը :

Այդ համբալներու խմբապետ Խ . . . ԵՐՔ Դ . . . ԽԻԹ, որ ինքզինքը Իզմիրի հայ Բօպէսիէրն հռչակելու տխմարութեամբ, Երօստրատի պէս հանրածանօթ դառնալու եռանդով կը մրկի, թող անկասկած ըլլայ թէ իւր լուտանքներու արժանի ընդարձակ եւ մանրամասն պատասխանը պիտի առնուի ի մօտոյ . . .

Բաժ. — Իսկ ճերմակ երես զաճաճին սրտին սեւութեանը առ այժմ բան մը չունինք խօսելիք, զի անոր քառան առնուած է արդէն :



ԲԻՍՕՅՈՎ, ԶԻՅԱՖԵԹ ՄԸ

Ի ՎԵԼԻ ԷՖԷՆՏԻ

Սահմանադրութեան 28րդ տարեդարձի առաւօտուն, մեր ընթերցողաց քաջածանօթ Գէշիւհ-Գոք Ահարոն աղային գտնուած փռան մէջ մեծ իրարոնցում մը կար. թապլարեարք և խամուրքեարք օր առաջէն որոշած ըլլալով տարեդարձի օրը ի Վելի Էֆէնտիի զբօսալայրը երթալ զբօսնուլ, յաճախողաց հացերը խիստ կանուխէն բաժնելէ ետքը ճամբորդութեան պատրաստութիւն կը տեսնէին : Ահարոն աղայն, որ խմբին հրամանատարն էր, միայն Զատիկի և Ծննդեան առաջին օրերուն դորժածած երկայն բալթօն հագէր, նոյնպէս տարին տասներկու ամիս անտուկին մէկ ան, կիւնը նետուած մնալէն ճմբկած քլալով կարմիր ֆէսը գլուխը դրեր և աթուակի մը վրայ նստած՝ համրիչն ի ձեռին հրամաններ կուտար մըշակներուն :

— Փիլիկ, ազ զէմպիլներն ու տէպպէն էլ ձիուն վրայ բեռցներու է ուր՝ աս մինասիպէթով ֆէօն քնչիյ մի թաղէ խօտ ուտի, զէօրէ մալիւմ ա՛, աս տարի էբէյիճէ զապուն ինկաւ. բամմանքդ ալ տիւն գնա, հարսըդ վէ տիւտիւ հանըմը, պախուսու մայմուռ պախըշու հանըմը թարաֆէս տալէթ արէ ու շիտտակ Վելի Էֆէնտի առ բեր մեղ դտիր, պարէ պայլական ճիւմպիւշ մի անինք. ա՛նոնց հիստէին իյնալիք քլալն եւ իմ թարաֆէս թէտիյէ տանիմ :

Փիլիկ ախպար այս հրամանը առնելէն ետքը մեկնեցաւ :

Ահարոն աղայն շարունակեց .

— Պէ՛յրոս, մնչուկներէն մէկը Գէորգ էմմիւին թահմիղը քչէ ուր՝ քառասուն բարայի ծածուած խայֆէ վէ քսան բարայի թօղ չէքէր առնէ գայ . Կէս պէկիրին ու իշուկին խօտն ալ քնչիյ մի պօլ տուէք ասօր :

— Ա՛ղա, խամուրքեար Մարգարն ու ընչերիճի թաթօս էմմին ֆէօս տի մնան, հէլպէթ ադ վազիֆէն իյֆա կանին .

— Թաթօսը խուզիին էփուելուն տի պէքլէյէ ու առնէ գայ, մարգարն ի՛շ միւճիպով ֆէօս տի մնայ . փուան մէջ եանաշմա Նիքեօլիէն զատ մարդ չի տի մնայ ըսինք ա՛ . ըմմէնն ալ բիսօլին տախիլ տ՛ըլլան .

— Էֆէնտըմ, մատաէն բիսօլին վրայ չէ, հագնելիք չունենալուն սէպէպովը չուզիր գալ .

— Թօֆաֆ բան, օրուան մի հըմար էրթայանք պիթ բազարինէն ատոր խաթ մի լաթ տ՛առնէանք, սա ո՛ւր է . անցածն օր նստեր ալիւրի չուվալէ նոր տիղլիկ մի կու կարկտէր, թող անի հագնի ու ձիուն դլլէն բռնէ ճամբայ ինայ .

— Վօտըը չօրապ չունի աղա, եէմէնին բօպիկ ստըով տի հագնի .

— Ա՛խպար, փեսայ տի հանինք ուր հէրիֆը սաղելու կ'ելլաք, խամուրքեար ըսուած մարդը հիչ չօրապ կու հագնի :

— պէլի էֆէնտըմ, չիտաակ է, թող անանկ ըլլի .

— Խըր ձիուն իրիվան ուտելիք գարիին տուպ ըակն ալ թող ձեռքը բռնէ ու ճամբայ ինայ :

Այս հրամանները տրուելէն երկու ժամ ետքը Ահարոն աղայն և իւրայինք վէլի էֆէնտիի դքօսավայրը մեծ ծառի մը շուքին տակ նստած էին .

Ահարոն աղայն, որ փիլիկ ախպօր վերադարձին անհամբեր սպասելէն չէր կրնար հանդարտ նստիլ, մերթ ընդ մերթ տեղէն կ'ելլէր և բաւական կը յառաջանար դէպ ի այն ճամբուն մէջ՝ սւսկից պիտի գային հրաւիրեալք . վերջապէս ժամը Կին փիլիկ ախպարը, տիկինը, զօքանչը և ասոր քոյրը (ըստ Ահարոն աղայի մայմուռ պախըչը հանըմը) հասան ի վէլի էֆէնտի :

— Վա՛յ մաշալլահ խայնանա հանըմ, ըամմեցէք, մեր տավէթը խապուլ ընենուդ հըմար տէրէճէսիդ մէմուռնիյէթ պէյան կանինք :

Զօքանչը — Քա աղլիկ, որերնու համար է ադ մայմուն հիյէթը ըսածը .

— Քուրուկ, դուն ալ հիչ լախուտըն չես հասկնար . կայնէ ես ճուղապ տամ : Մեծապէս չոր հակալ ենք կնկահար աղա քի մեղ մտքէ չէք հաներ .

— Հիչ մտքէ կելուի՞ք մի ես էֆէնտըմ, պախուսուռ ըամմանքնիդ :

— Շնորհակալ ենք, ան ձեր զաթութինն է, մենք ալ տունը նստեր կը մտմտայինք կոր քի՛ ինտոր ըլլար տէ ասօր դուրս մը ելլայինք, չինքի երկու շարաթ է մեր Գիրգորիկ աղային Պուրա երթալէն պէրի քրոջս տունն եմ տէ՛ դուռնէն դուրս ելած չունինք :

— Ա՛յ, աղադ հոռ չէ՞ մի .

— Խայիր հէքիմները պրուսային պանեօները գնա ըսին :

— Էֆէնտըմ, ճիպ դարտակ բաներ եին ատոնք, իրար ճաշնալէս պէրի ադ մարդը կըխ կըխ է, ադ պիչիմ պանեօները բարա մի չին աներ, թօլրախ պանեօին ադ մարդուն ցաւն ալ կը տանի տէրտն ալ :

— Տեսա՞ր քուրուկ, սօրուճու օլ քի պիլիճի օլաքն կըսեն, ասոնք դրսեցի մարդիկ են, շատ բան գիտեն . հէմէն աղայիդ վաղը նամակ մը դրենք՝ ելլայ գայ, թտրիֆ ըրած թօլրախ պանեօին մտնայ : Ճօնըմ կնկահար աղա, ադ ըսած պանեօք բէք սուդ բան չէ եա՛ :

— Էֆէնտըմ, պօյ պօյ է, քէսէիդ կիւվէնմիշ կըլլաս իսէ՛ զուռնաճիպալի եղիր .

— Է ադ պանեօն ո՛ւր կը գանուի :

— Պալըխին .

— պալըխին մի՛ . . . վո՛ւյ, աշիդ խաղայ, նոր հասկցայ, ինչ ալ տալտալ եմ եղեր .

— Մէրամ լաթիֆէ է տիւտիւ հանըմ, վախտէ ըմմենքս ալ տի մեռնինք ըմմա՛ մայմաւ հանըմը կու մեղքնամ ուր շատ բան քաշեց .



— Ատ թարաֆէն բէք իրաւ եա :

— Անդիու թարաֆէն ալ իրաւ ըլլալու հըմար, կըսիմուր՝ հըմէն Աստուած պետականութիւնը յաւիտենական բժշկութիւն պարգեւեցէ :

Նոյն միջոցին թապալտեար մը, « Աղա՛, թաթօս էմմին խուզիին եփեր կու բերէ » ըսաւ .

— Անանկ է նը՛ ճուճպուչին վախթը էկած է . սա ըախին ու հալվային տէպպէն բերէք :

(Շարունկիւն)



ԻԼԻԿ ՔԷՄԻԿԻՆԻՆ ԲՕՍՏԱՃԸԼԸԼԸ

Պ*** չէհրինտէ, թահսիլի իւմ իշուն կիճէլի կիւնտիւզլի պիր մէթէպտէ պուլունան 14 եաշընտա մատմաղէլին պիրի, մէթէպտէ հէր հաշլամա վէ եա զըզարթմա բիչիլիլիքտէ՛ պիր եօլունու պուլուպ՝ իլիկ քէմէքլէրինի սաղլամաղա վէ

մաշուգընա եազաղը մէքթուպու գըվըրըպ' քէ-
մի ին իշինէ վազ իտուպ' էօյլէն վագանսարընտա
մէքթէպ սօգաղնտան կէշմէսի մուգարէր օլան մա-
շուգընա տօղրու տթմայը քէնտիսինէ պիր տտէթ
իթմիշ, միւսիւ տախի իշպու պիւա իւճրէթ բօս-
թաճընըն վասթթասըյլա հաթթատա պիր իքի մէք-
թուպ գապուլ իտէր իմիշ:

Կէշէն կիւն մատմաղէլ եինէ մէքթուպուճու
քէմիկ վասթթասըյլա սօգաղա աթթըղընտա' պիր
քէօրէք հէման աթլայուպ քէմիկի գաբար վէ գա-
շար, միւսիւ տախի քէօրէկի գօվալամաղա պաշլար,
անճագ, գալապալըդը պիր սօգաղտան կէշտիք-
տէ' այաղը գայըպ տիւշէր, եօլճուլարտան պաղը-
լարը, «Աճապա քէօրէք լաղըմը պիր շէյ մի չալ-
մըշ,» տէյէրէք' պասթօն իլէ թէհտիտ կէօթէրիպ
աղղընտան քէմիկի պրադտըրըղլարընտա' քահա-
հայա պաշլարլար, պուճարտան էհլի մէրագ պիր
գաթ քէմիկի մուայէնէ իթտիքաէ աթիտէքի մէք-
թուպու պուլուր, միւսիւ իտէ, մէքթուպու տիւ-
նէմէք իշուն պիրիքմէտէ օլան եօլճուլարըն քահ-
քահընտան գուրթուլմագ իշուն սիվիշի վէրիք:

Իշթէ մէքթուպըն սուրէթի:

Միւսիւ...

«Պիր հաթթատան պէրու մէքթուպ վէրէմէտիլիմին
սէպէպի' եէմէքտէ իլիկ քէմիյի պուլունմատըղընտան
խտի' կէրէի հէր կիւն էօյլէն վագանսարընտա մէքթէ-
պին էօնիւնտէն տէօնիւպ կէշտիլինի կէօրիւեօրըմ, ան-
ճագ, նէ' չարէ, մէքթուպու մէվճուտ' իլիկ քէմիյի նա
մէվճուտ' արթըգ թահամիւլիւմ պիթտի, տիւշիւնիւպ
թաշնտըմ, քէյֆսիլիւմ տիյէրէք' պու կիւն հաշլամա
իւթէտիւմ, վէ օնուճ իլիկ քէմիյի վասթթասըյլա մէքթու-
պու եօլլաեօրըմ եարըն ագշամ հալա միսասատէ իտէր
սէ' թէքմըլ շակիրտանշակիրիքտէ օլարագ Ա... ժառտէ-
նինտէ թուռ իտէճէյիլ. կէրէք մէքթուպուճու վէ կէրէք
պագլա չիշէյի լէնիլինտէ ալաճագ կանթընը պու տէֆա
նշան գօյտուլուճու գ աքացիա աղաճընըն ալթընա տէյիլ'
չընար ալաճընըն ալթընտաքի թաշըն արասընա գօյմա-
լըսըն:

Պ' քէրիմ' սէնի

Ունո' իմա պէնի

Ա.ԿՈՒՍԹԻՆԱ

Հայըֆ քի, իշպու մէքթուպուճու միւնտէ-
րիճաթընա միւսիւնին մալիւմաթը օլամատըղըն-
տան, կէրէք ճէվապընը վէ կէրէք պագլա չիշէյի
լէնիլինտէ կանթըն աղաճըն ալթընա վաղ իտէմէ-
միշ տիր:

Պիր գաշ կիւն սօնրա, պալատէ քի մէքթուպ
մէքթէպ միւսիւնին կօնտէրիլիպ, միւսիւ տա-
խի քեաթֆէի շակիրտանըն հալուրընտա մէքթու-
պու եազան մատմաղէլէ ֆէ-է-է-է-է-է քէնտի էլինէ
վէրիպ օգուլթաուրմուշ տըր:

Շիւպհէսիլ արթըգ օնտան սօնրա մատմա-
ղէլին հաշլամա եէմէյինէ իշտահը գալմամըշ տըր:

Ն Կ Ա Ր Հ Ա Ն Ո Ւ Կ

Թիի 30



Ա.

Բ.



Ն.

Դ.

Ռ.



Ա.

Ջ.

Զ.



Սոյն հկարհանուկը առաջին անխալ կարգացողին
պարգեւն է մէկ եռամեայ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ (13 թերթ)

Ե. հատորի վերջին հկարհանուկը կարգաւ այսպէս:

« Երանի այնոցիկ որք վուրթան ոլորմիլ »

ԾԱՂՐԱԲԱՂ

Պարոն Կակոսին տիկինը ամուսնանալէն երեք
ամիս ետքը դաւակ մը կը ծնի:

— Ագ ի՞նչ է, կըսէ Պ. Կակոս, մեր գիտցածը
տղայ մը ինն ամիսէն կը ծնի, աս որչա՛փ կանու-
խէն բերիք դուն:

— Ներեցէք, Կակոս աղա, կը պատասխանէ կի-
նը առանց խռովելու, ես կանուխէն չի բերի՝ դուն
հետո ուշ կարգուեցար:

Մա՛յրիկ, հացագործը եկաւ:

— Կայնէ քա, սաոր աչկին մէյ մը երեւամ, զէ-
րէ 2-3 օր է բերած հացը բիւթիւն խմոր է: Հա-
ճի ախպար, հաց մը տուր նայիմ:

— Տամ ա՛պըլիկ:

— Առդապլիկը ո՞վ է:

— Առկա պլիկ չէ, ապըլիկ ըսի, սանքի ապլա
ըսի կուգիմ:

— Էյ, ես ապլա՞ եմ քի...

— Էֆէնարմ, ապլային մէյնութիւնը քոյր է,
մեր էրկիրը ասանկ կըսին:

— Աս տեղն ալ ապլա տէյի խըղմէթճի կնկանը
կըսեն:

— Ագ խուսուսը չի գիտէանք, հօշ՝ զարարու

բան մի չէ, խաթիւն մի տանը հէմ հանումն է հէմ ապլան:

— Անանկ է ամա՛ սա տուած հացդ ալ խմոր է:
— Գուլին մէկ է:

— Սա թարափը մո՞ւկն է կերէր, ի՞նչ է եղեր:

— Քօրական (փէքէ) կօ՛թն է մտեր:

— Քա ճանըմ, առ ամեն օր մեզի խմօ՞ր հաց պիտի կերցնես:

— Գուլին մէկ է, ըսինք ա՛:

— Մեղայ տէր Աստուած, ադ քիւլըդ մոխրըդ պաշխասիին կլլեցուր, իրեք տարի է բարանիս կառնես կօր:

— Իրեք տարի է հացս կուտիս կօր:

— Ձէ արթըխ, սա չորս օրս բերած հացդ բիւթիւն խմոր էր:

— Շիտտակ է, չորս օր առաջ չէթէլէն լեցեր էր նը՝ հէչ խօրաթա մի չունէաք, էրկու օր է մէծիտիյէ մի տվաք ու չէթէլէն թէնգիլ արիք ա՛, հըմայէկըս տէր բարթամին վողաթապին պէս լեղիւդ էրկնցեր է, ադ խուսուսը չէթէլէին պօյն էրկննայ, նէ ըսէ, ղէօրէ ան առեն խմորն ալ կուտիս քէքէքն ալ:

Ա Ձ Դ



Դ Ե Ղ Ա Ր Ա Ն

ԱԼԻԲՍԱՆ . Մ. ՏԵՕՅԻՃԵԱՆ

ի Խառգիւղ Հալըճ օղլու թիւ 26

Ձորս տարիներէ ի վեր հաստատեալ սոյն դեղաբանը, որ մօքըութեան, ուղղութեան և զնոց չափաւորութեան պատճառաւ իւր յաճախորդաց վստահութեան և համակրանացն արժանացած է, այս անգամ բնակութիւնը ի Խառգիւղ փոխադրելով՝ ըստ խնդրանաց բազմաց յետ այսօրիկ գիշերներն ալ պէտք եղած ժամանակ դեղագիրներ պիտի պատրաստէ:

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

((ՏԸ ՍԷՆՎԱԼԻԷ ԿՈՄՍԸ))

Տեսարանն է Լուվրի արքայական պալատին խիստ չքեղ զարդարեալ մէկ սրահը: Գիշեր է եւ տեսարանը գեղեցիկ կանթեղներով լուսաւորուած է: Խորը եւերկու կողմը դրունքս Գետինը գորգաւորեալ է:

ՏԵՍԻԼ Ա.

Ֆրանսուա Ա. եւ տը Լաթուր Լանարի

Ֆրանս.— Կո՛մս, տ՛լ կուզեմ վերջ մը տալ այս բանիս, իրաւ, գիւղացի և աննշան ծնունդ մը՝ բայց սիրուն կին մը:

Լաթուր.— Կիւրակէ օրերը եկեղեցին պատահած ունի՞ք իրեն:

Ֆրանս.— Այո, Սէն Ժէրմէն տէ Բուէի եկեղեցին, ուր ամեն կիրակի կ'երթամ:

Լաթ.— Երկու մաիս կա՞յ արդեօք:

Ֆրանս.— Այո՛:

Լաթ.— Այդ գեղեցկուհին ո՞ւր կը բնակի:

Ֆրանս.— Պիւսի անեւ վողօցը:

Լաթ.— Պարոն տը Բօսէի տա՞նը քով:

Ֆրանս.— Այո, հոն, ուր մէծ պառ մ'ալ կայ:

Լաթ.— Եւ այն կնոջ ետեւէն կ'երթար:

Ֆրանս.— Դահլիճ պառաւ մը, որ անոր աչ-

ԱՆՁԻՆՔ

Ֆրանսուա Ա. Արքայ Գաղղիոյ

Կոմս տը Սէնվալիէ

Թրիպուլէ. Միմոս

Գլէմօն Մարօ Խորհրդական

Տը Բիէն

Պարթայեան

Տը Լաթուր Լանարի Պալատական

Պ. տը Վիք

Պ. տը Պրիսօն

Պ. Բօսէ

Պ. տը Մօնչիւնի

Պ. տը Կօրթ

Մօնօրանսի

Սալթապատիլ

Պլանչ. Գուսար Թրիպուլէի

Մակլօն Բոյր Սալթապատիլի

Պէրարտ Խնամակալուհի Պլանչի

Տիկին Բօսէ

Մանկալիկ մը

Պալատականք. Իշխանուհիք. Ձօրականք



ՖԼՕՌԻՕ ԵՒ ՌՕՊԱԹԹԻՆՕ

ՇՈՐԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԴԵՐՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԱԿԱՆ

Սբաթ հաշտարիս ընդ ՎԷՄԵՆԵՐԻՆԻ Լ ՍԵ ԶՊԷՆ

Ամեն երկուշաբթի Կ. Պոլսէն կը մեկնի ի Մարտիլիա, հանդիպելով Տարտանի, Զմիւսին, Քիոս, Պիւթօն, Քաթսնիս, Մէսինա, Բալէրմօ. Նտրօլի, Լիւթօնօ և Ճէնօվա: (Սոյն չողկնաւը երկու շաբաթը անդամ մը միայն Զմիւսնիս և Քիոս չի հանդիպելով Սելանիկի ճամբով կը մեկնի:)

Ամեն երկուշաբթի Սուլինա, Կալաց և Իպրայիլ:

Ամեն Զողկշաբթի Պրէօն, Պրինտիդի, Պար, Անքօնա, ՎԼՆԷՅԻԱ և Թրիէսթէ: Ամեն Հինգշաբթի ուղղակի յՕտէսա:

Երկուշաբթի անգամ մը ԴՆ. օրիւր Սամօն, Տրապիզոն և Պաթմօ: Իւրօր թիւն և հանդիպելուն կը տրուին ուղեւորաց: Զափաւոր զին: Օրինաւոր դնելով վաճառք կընդունուի Եւրոպ. երկիրներու համար:

Դիմել առ Պոլսոյ մասնաճիւղն Պահճէ գաբու թիւ 38

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՏԱՆ

Զադմողճըլար հօգուշ Սադա չէշմէի 75մ 56

Փռանոցէն քերական, հայերէն բացատրութեամբ 60 բարա:

Գործնական նոր քերականութիւն ֆըրանսերէն լեզուի 7 ԴՏԿՆ,

Բարիզեան արձագանգ 10 »

Ինքնապաշտպանութիւն 6 »

Ուղեւորութիւն շաբթ զԼուսնով 8 »

Համառօտ նոր քերականութիւն 3 »

Պատկ. պարզ քերական 100 հատը 10 »

Մանկանց բժիշկը 60 բրյ:

ՏԵՐ - ԽՄԲԱԳԻՐ

ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՏՊԱԳՈՐՈՒԹԻՒՆ ԳՐԱՇԱՐԱՑ ԸՆԿ.

معارف نظارت چاپخانه ۹۰۰ نومروى رخصتنامه سيله طبع اولشدر

ԹԵՐԹՕՆ ՍՈՒՐՀԱՆԱԴԿԻ

Վ. ՀԻԿՈ

ԱՐՔԱՅՆ ԶԻՍՆՈՒ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՍ

«Տստմը հայկի մ'է, ուր կ'անդրադառնայ բնութիւնն.

Թատրոնը տեսարան մ'է, ուր ամէն ինչ պարծիս և կրնայ անդրադառնալ արտեստին և ներգաշնակութիւնս մոգական գաւազանին տակ:»

Վ. ՀԻԿՈ

Եղելութիւնն ի Գաղղիա 152*



Հրամանաւ Մէարիֆի

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ԳՐԱՇԱՐԱՑ ԸՆԿ.

1888

— 4 —

քերու՛ն, բերնի՛ն և ականջներու՛ն պահպանութիւն կընէ, քովէն դատուած չունի որ . . .

Լաթ.— Իրա՛ւ կըսէք.

Պրան.— Եւ վարմանալին սա է որ սե վերարկուով ծպտեալ մէկը ամեն երեկոյ անոր տունը կը մտնէ:

Լաթ.— Ուրեմն դուք ալ անոր պէ՛ս ըրէք.

Պրան.— Ի՛նչ . . . կրնաս նէ մօտեցիր, տունը դոց է, պատ մ'ալ կայ:

Լաթ.— Զեր վեհափառութիւնը այն կնոջ հետամուտ եղած օրէն ի վեր, անկէ յուսոյ նշաններ ընդունած է արդեօք.

Պրան.— Եթէ չեմ սխալիր, իւր մէկ քանի նայուածքներէն ինձ այնպէս թուեցաւ որ այնչափ սոսկալի երեւցած չեմ աչքին:

Լաթ.— Արդեօք դիտէ՞ թէ արքայն կը սիրէ զինքը.

Պրան.— Զեմ կարծեր, ըստ որում ըսպասաւորի բրդէ հագուստով կը ծպտիմ:

Լաթ.— Կարծեմ ժողովրդապետի մը տարփածուն է որ կը սիրէք անմեղ սիրով:

Պրան.— Լուէ՛, ոտքի ձայն կայ, սիրահարութեան մէջ յաջողելու համար լուռ կենալու է. (Թախտախէն, օր նոյ եկած էր), այնպէս չէ՞.